Արձանագրություն N 2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՆՏ-22/5 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

19 հոկտեմբերի 2022թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մկրտչյան, Ս.Գարանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Կիրակոսյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	***Չափաբաժնի անվանումը***	***Գնման հայտով սահմանված գնման գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)***
1	հատակի լվացման լաթ	235 200
2	հատակ մաքրելու ձող, պլաստմասե, փայտյա	14 620

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 17.10.2022թ.-ին ժամը 12:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 18.10.2022թ.-ին ժամը 12:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Հասցեներ
1	«ԳԱՍԱԳ ՏՐԱՆՍ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 04220542, Արարատի մարզ, գ. Այգեպատ, Վ.Համբարձումյան 4 suren88@list.ru, հեռ. 096225566
2	Ստեփանյան Ջուլիետա Վազգենի Ա/Ձ	ՀՎՀՀ 80608313, ք. Երևան, Հովհաննես Հովհաննիսյան փ., 26/2 շ., բն 13,Հեռ.055 588 450
3	Դավիթ և Միքայել ՍՊԸ	ՀՎՀՀ 01849217, ք.Երևան, Լենինգրադյան 31/12, davidmiqayel2021@gmail.com, հեռ.՝ 095 400351

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ քննչական կոմիտե **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՆՏ-22/5** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

08.10.2022թ.-ին հնարավոր մասնակցի կողմից էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ստացվել է հարցում թիվ ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՆՏ-22/5 ծածկագրով մրցույթի 2-րդ չափաբաժնի /հատակ մաքրելու ձող, պլաստմասե, փայտյա/ տեխնիկական բնութագրի վերաբերյալ.

Հարցում 1. Հայտ ներկայացնող մասնակցի կողմից եղել է հարց՝ հատակ մաքրող ձողի մաքրող մասի երկարությունը կարո՞ղ է լինել 35 սմ:

Պատասխան 1. Տրվել է պատասխան, որ տվյալ չափաբաժնով նախատեսված ապրանքը պետք է մատակարարվի հրավերում նշված բնութագրին համապատասխան, մասնավորապես՝ փայտյա ձողի երկարությունը պետք է լինի 130-135սմ, իսկ մաքրող մասի երկարությունը 40 սմ:

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/հ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
			Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«ԳԱՍԱԳ ՏՐԱՆՍ» ՍՊԸ	235 200	235200	0%	235200	235200	0 %	235 200	
	Ստեփանյան Ջուլիետա Վազգենի Ա/Ձ		240000	0 %	240000	240000	0 %	240 000	Մերժված
	«Դավիթ և Միքայել» ՍՊԸ		245000	20 %	294000	245000	20 %	294 000	Մերժված
2	0	14620	*Չկայացած /հայտ չի ներկայացվել/*						

Աճուրդն ամփոփվել է 18.10.2022թ-ին և Համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «ԳԱՍԱԳ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն:

2-րդ չափաբաժինը չի կայացել հայտ չներկայացվելու պատճառով:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակիցների ներկայացրած հայտերը, արձանագրեց, որ Համակարգի կողմից 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «ԳԱՍԱԳ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

- Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված չէ արտադրողի կազմակերպաիրավական ձևը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև **ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՏՆՏ-22/5** ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել՝ 20.10.2022թ.-ին ծանուցել 1-ին չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ԳԱՍԱԳ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց նիստը շարունակել 24.10.2022թ. ժամը 10:00-ին, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0:

9. 24.10.2022թ. ժամը 10:00-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 24.10.2022թ. ժամը 10:00-ին: Հանձնաժողովն ուսումնասիրեց և արձանագրեց, որ «ԳԱՍԱԳ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է շտկման ենթակա փաստաթուղթը:

Հանձնաժողովը որոշեց՝

- «ԳԱՍԱԳ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնի մասով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

24.10.2022թ.-ին Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից «ԳԱՍԱԳ ՏՐԱՆՍ» ՍՊԸ-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 1-ին չափաբաժնի մասով անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

10.5 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-ին կետի համաձայն ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

10.6 Հաստատել 2-րդ չափաբաժնի մասով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Գագիկ Արշակյան

անդամներ՝ _____ Վահագն Մկրտչյան

_____ Մարիամ Նիկոյան

_____ Սիլվա Գարանյան

քարտուղար՝ _____ Տաթևիկ Կիրակոսյան